

ՍՈՒՐԷԱՆԳԱԿ ԲԻԻՋԱՆԻԵԱՆ.

Պաշտպանութիւնը — Դատ: — Մուշէն եւ Ս. Կարապետէն: —
ցուցաւ ճշտ յարաբերութեան խնդրոյն առթիւ: — Վախճանեալ ե-
պիսկոսութիւնը: — Խորէն Արքեպիսկոպոս:

Մեր սիրելի եղբարց կրած անտանելի հարըս-
տահարութեանց համար, երբ տեղուցս Ազգ. Վարչ-
ութեան բողոքանաց եւ խնդրոյ համաձայն՝ Բ.
Դուան հրամանաւ՝ Անդուայ Վիճակէն Վուզուշ-
ձանի Գայմազամ Շահ — Հիւսէին Պէյի Պօլիս
պիտի բերուէր, օտար շահուց պաշտպան Մասիս
յրապիր յանկարծ մի նամակ հրատարակեց նոյն
Գայմազամին ի պաշտպանութիւն՝ զոր իբր թէ
Երզնկայի եւ Բաբերդի միացեալ վիճակաց Առաջ-
նորդ Արթ. Գրիգորիս Վարդապետ Ալեաթճեանց
գրած ըլլար:

Ուստի հրամանաւ Ազգ. Վարչութեան՝ յի-
շեալ Վարդապետ հոս եկաւ բացատրութիւն
տալու եւ զինքն արդարացնելու համար:

Դաք զատեցէք հիմա, թէ յանցանքը որո՞ւ է:
— Ժողովուրդը կհարստահարուի եւ կը բողոքէ,
Ազգ. Վարչութիւնն ալ կխնդրէ եւ Բ. Դուռը կը
հաճի արդարութիւնը ի գործ դնել, եւ ահա Մա-
սիս եւ Ալեաթճեան Վարդապետ կաշխատին փաս-
տարան եւ պաշտպան կանգնել վերջիշեալ հա-
րատահարիչ բռնաւորին:

Ինչո՞ւ ուրեմն քանի՞ քանի անգամ Մասիս
եւ Ալեաթճեան յիշեալ Պէյին վերայ դառն յօ-
դուածներ եւ բողոքներ գրեցին, եւ այժմ ի՞նչ է
պատճառ՝ որ նոյն իսկ իրենք իրենց դէմ կդրեն,
եւ իւրեանց շահուն համար՝ մեր սիրելի եղբայր-
ները՝ ազգը՝ ոտքի տակ տալ, Ազգ. Վարչութիւ-
նը խայտառակել, եւ Բ. դուռը կասկածեցնել կը
յանգզին . . . :

Յիշեալ խնդրոյ համար Փունջ լաւ գրեց եւ իրա-
ւամբ եւ արդարութեամբ խայտառակեց Մասիսը:
Սակայն Մասիս փոխանակ ճշմարտութեան առ-
ջեւ կոր ի գլուխ կարմրելու եւ ապաշաւելու, Փուն-
ջէն հայհոյանք զիպարտուեցայ եւ խայտառակուե-
ցայ ըսելով, Բ. դուան բողոքեց եւ դատ բացաւ
Փունջի դէմ:

Փունջն ալ հրապարակաւ դատուիլ խնդրեց, եւ
քանի անգամ է 200 ի չափ ազգայնոց ի ներկայու-
թեան դատուեցան, եւ դեռ վերջնական արդիւնքը
խմանալու համար՝ պէտք է մի քանի օր սպասել:

Ամօթ Մասիսին, եւ փառք ազգասէր Անկեան
Թաղէոսին, որ այս դատին փաստարանութիւնը
ազգասիրաբար յանձն առաւ ի նպաստ Փունջի:

Մուշէն եւ Ս. Կարապետի Աւանքէն խիստ տը-
խուր եւ սրտաճմիկ լուրեր ունին. Լաւ օտուգե-
լէս զկնի կգրեմ:

Այս անցից մէջ մի կտոր ալ կայ, որ վերջի-
շեալ անցքին կնմանի:

Ո՛հ, ինչո՞ւ Քրտերու վերայ կխօսիմք, կգրեմք,
հեղձամեղձուկ կողբամք եւն. ինչո՞ւ . . . ինչո՞ւ .
. . . երբ մեր ազգէն են թեղադրողները եւ պաշտ-
պանողները, երբ ասոնք իբր — Եւ — Եւ — հրատա-
րակուած եւ հոշակուած ալ լինին, ալ ի՞նչ պի-
տի ասեմք . . .

Թէպէտ պատմական կարեւորութիւն ունի Յու-
նաց պատրիարքարանէն վերջերս գրուած եւ պաշ-
տօնապէս մեր Պատրիարքարանին հաղորդուած
վճռագիրը՝ իբր թէ այսուհետեւ Յունական եկե-
ղեցւոյ մէջ խստիւ արգիլուած է կրկնամուսնու-
թիւն երբ Հայերէն մէկը իւր կնիկը թողուլ ուզե-
լով՝ Յունաց դիմէ. սակայն ով որ լաւ տեղեակ
է Յունաց հոգեւորականութեան վիճակին՝ կծի-
ծաղի, քանզի այս խոստումը նոր չէ, որպէս ու-
մանք կը կարծեն. արաբիսի խոստումը թէ բա-
նիւ եւ թէ գրութեամբ շատ անգամ խոստա-
ցուած, եւ սիրոյ խօսքեր փոխանակուած են մեր
եւ Յունաց պատրիարքարանաց մէջ, բայց գործերը
հակառակ արդիւնքներ ցուցած են միշտ:

Այս վճռագրոց վերայ՝ դեռ շատ ժամանակ
չանցած նոր Պօլսոյ մէջ կրկնամուսնութիւն պա-
տահեցաւ:

Դարձեալ Պօլսոյ մէջ՝ Չատկի տօնին՝ Յունաց
մի եկեղեցւոյ մէջ՝ ի ներկայութեան պատրիար-
քին՝ անարգանք եղաւ մեր ազգութեան դէմ:

Անբնապէս՝ պէտք է մեզ յարաբերութիւն ընել
նոցա հետ, բայց կրօնական խնդիրներ երբէք չը
յուզել, մանաւանդ թէ նոքա միշտ խաբել գիտեն:

Ասորոց Առաջնորդ Բովհաննէս Եպիսկոպոս
Ռշտունի և Պանարմայի Առաջնորդ Աւետի Ե-
պիսկոպոս վախճանեցան:

Զմիւռնիոյ Ալիմակին Երեսփոխանական Ժո-
ղով՝ Առաջնորդական ընտրութեան համար կըր-
կին քուէարկութիւն կատարելով՝ ըստ հրահան-
գաց Եղբ. Աւարչութեան, Գեր. Խորէն Երքեպիս-
կոպոս նար՝ պէյ՝ բացարձակ առաւելութեամբ
քուէից դարձեալ Առաջնորդ ընտրուեցաւ:
Թէպէտ Նորին Գերապատուութիւննա և ըստ
Թախանձանաց Պէշիքիմաշու Ժողովրդեան զը-
ժուարացաւ ընդունել յիշեալ պաշտօնը, բայց ի
վերջոյ՝ զիջաւ Զմիւռնայէն եկած հրաւիրակաց
Թախանձանաց, և Եղբ. Աւարչութիւնը վաւերա-
ցուց ընտրութիւնը:

Զմիւռնիայն Խորէն Երքեպիսկոպոսի նման Ա-
ռաջնորդի մեծ կարօտութիւն ունէր և զառա-
ճար Աստուած՝ զի համաձայնութեամբ և փո-
խադարձ անակցութեամբ թէ Խորէն Երքեպիս-
կոպոս և թէ Զմիւռնիացիք մեծ՝ արդիւնաւոր և
ազգոգուտ դործերով առաւել ևս փառաւորութիւն:

Մեծաւ . . .
Ռ. Մ. 1884 . . .
1873 Ս. Դ. 14, է Կ. Պէշ:

ԾՆՆԴԵԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՑ ՄԷՋ.

Ս. Երուսաղիմէն մարտ 30 թուով՝ զրուած
մասնաւոր նամակ մի Լատինաց և Յունաց մէջ
Ծաղկազարդի կիւրակէ օրը տեղի ունեցած կը-
ռիւն ու այս պատճառաւ մեզ ալ եղած վնասը
կպատմէ հետեւեալ կերպիւ:

«Ծաղկազարդի օրը Ծննդեան եկեղեցւոյ մէջ
մեր Ս. Պատարազը մատուցուած ատեն, Լա-
տինք՝ որոց նոյն օրը Չատիկ էր, իրենց սովո-
ւութեան համեմատ թափօր կազմած՝ եկեղե-
ցիէն դուրս շրջադասած ատեննին փոքր երկա-
թեայ դռնէն ներս մտնելով կուզէն անցնել այն
ընդարձակ եկեղեցւոյ մէջէն՝ ռեսկից միայն Հայք
և Եջիք իրաւունք ունին թափօրիւ անցնելու:
Այս արտաքոյ կարգի ղեկքը Յունաց զայրոյ-
թիւ շարժելով՝ դէմ կ'ընեն և կուզեն արգելել:

«Լատինք կրօնանան, և երկու կողմանէ կուր
կսկսի. քարերով փայտերով զիրար կզանակո-
ծեն կառավարութեան զօրքը կմիջամտէ և
«յիսնապետին մատը կկտաւի: Այսպէս Լատի-
նաց թափօրը երկու մասի կրաժնուի և մէկ
«մասը մեր եկեղեցիէն ու միւսը իրենց դռնէն
«վաւերելին կմտնեն:

«Այս շփոթութեան ատեն, մեր եկեղեցւոյն
«եղած վնասը սա է որ, Լատինք սեղանին վրայի
«խաչիրը և քշոցները կվերցունեն և իբրեւ քար
«ու փայտ կգործածեն Յունաց դէմ: Թէև մեր
«լուսարարը կջանայ արգելուլ ու շտալ, սակայն
«Լատինաց զայրոյթը զապել կարելի չըլլար:

Փետ. Ա. Դ. 11, Թ. 779:

ԼՐԱԳԻՐՔ.

Հայրենիք որ Բարձր. հրամանաւ 4 ամիս դա-
տապարտեալ էր՝ 1 1/2 ամսոյ ներդրութեամբ պի-
տի հրատարակուի այսօր (Մարտ 17), ինչպէս
նաև Մեղու կիրակի օր, որով Հայ մամուլը դա-
տապարտեալ թերթ կունենայ առ այժմ միմիայն
Փունջը:

Երեւելեան Փող լրագիրն ալ, որ ժամանակէ մ'ի
վեր կամովին դադարած էր, այս անգամ՝ տղա-
զրական Տեսչութեան կողմանէ ստացած հրամա-
նադրին զօրութեամբը յառաջիկայ մարտ 21 Չո-
րեքշաբթի օրուրնէ Բարթող Սուր՝ էֆէնտիի
խմբագրութեամբը վերստին հրատարակուելու պի-
տի սկսի, որոյ առթիւ խնդակցութիւննիս յայտ-
նելով մեր Մեծ. պաշտօնակցին, յաջողութիւն
կմաղթենք իւր այս նոր ձեռնարկութեամբը:

Օրէք Թ. 890, Մ. Դ. 17.

Ամսոյս 11 էն Փունջն ևս սկսաւ հրատարա-
կուիլ՝ երկամեայ դադարման ժամանակն լրա-
ցած լինելով:

ՎԵՐԱԳՆԱԸ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Այսօր (Ապրիլ 30) Գեր. Խորէն Նորայոսակ
Եպիսկոպոս Աջոգեանց մեկնեցաւ ի Ս. Էջմիածնէ
վերադառնալ ի Կ. Պոլիս և անտի յԱրմաշ: